Հաշվետվություն

2026 թվականի սեպտեմբերի 21-ից 25-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (Սանյա) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Սուրեն Թովմասյան - Կադաստրի կոմիտեի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (Սանյա), 2026 թվականի սեպտեմբերի 21-ից 25-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի Գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային կոմիտե:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային կոմիտեի (UN-GGIM-AP) 15-րդ լիագումար նիստին և «Երկրատարածական գիտելիքներ և նորարարություններ՝ կլիմայական դիմակայունության և կայուն զարգացման համար» միջազգային սիմպոզիումին:

5. **Քննարկված թեմաները.**

   - Երկրատարածական տվյալների և տեխնոլոգիաների կիրառումը կլիմայական փոփոխությունների հետևանքների հաղթահարման և կլիմայական դիմակայունության բարձրացման նպատակով:
   - Երկրատարածական տեղեկատվության դերը կայուն զարգացման և ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների իրականացման գործում:
   - UN-IGIF-ի (United Nations Integrated Geospatial Information Framework) կիրառումը ազգային մակարդակում՝ երկրատարածական տեղեկատվության կառավարման համակարգերի կատարելագործման նպատակով:
   - Թվային փոխակերպումը, նորարարական երկրատարածական տեխնոլոգիաները և արհեստական բանականությունը՝ որոշումների կայացման գործընթացների բարելավման համար:
   - Երկրատարածական տվյալների ինտեգրումը տարբեր ոլորտներում, այդ թվում՝ շրջակա միջավայրի, կլիմայի, հողային և ջրային ռեսուրսների կառավարման ոլորտներում:
   - Տվյալների փոխգործունակություն, ստանդարտներ և միասնական երկրատարածական ենթակառուցվածքներ:

- Երկրատարածական գիտելիքի, մասնագիտական կարողությունների և տեխնոլոգիական ներուժի զարգացում, ինչպես նաև միջազգային համագործակցության և փորձի փոխանակման հնարավորություններ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Միջազգային սիմպոզիումի և աշխատաժողովի շրջանակներում քննարկվել են երկրատարածական տեղեկատվության և նորարարական տեխնոլոգիաների կիրառմանն առնչվող արդիական հարցեր՝ ուղղված կլիմայական փոփոխությունների պայմաններում դիմակայունության բարձրացմանը, կայուն զարգացման ապահովմանը և որոշումների կայացման գործընթացների արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել երկրատարածական տվյալների՝ կլիմայական ռիսկերի գնահատման և կառավարման, շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման, աղետների ռիսկի նվազեցման և կայուն զարգացման նպատակների իրականացման գործընթացներում կիրառման հնարավորություններին: Քննարկվել են նաև թվային փոխակերպման, արհեստական բանականության և ժամանակակից աշխարհատարածական տեխնոլոգիաների կիրառման, տվյալների որակի և հասանելիության, ինչպես նաև տարբեր աղբյուրներից ստացվող տվյալների ինտեգրման և փոխգործունակության ապահովման հարցերը: Առանձնակի ուշադրություն է դարձվել Միավորված ազգերի կազմակերպության **Integrated Geospatial Information Framework (UN-IGIF)** շրջանակի կիրառմանը՝ որպես երկրատարածական տեղեկատվության կառավարման ազգային համակարգերի զարգացման և կատարելագործման գործառնական հենք: Կարևորվել են UN-IGIF-ի ազգային մակարդակում ներդրման, ինստիտուցիոնալ և տեխնիկական կարողությունների զարգացման, երկրատարածական տվյալների ենթակառուցվածքների կատարելագործման, ստանդարտների կիրառման և միջգերատեսչական համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը մասնակցել է միջոցառման շրջանակում անցկացված պանելային քննարկմանը՝ նվիրված երկրատարածական տեղեկատվության կիրառմանը արհեստական բանականության և կլիմայական դիմակայունության համատեքստում:

Միջոցառումների ընթացքում կարևորվել է միջազգային փորձի փոխանակումը, մասնակից երկրների կողմից իրականացվող նախաձեռնությունների ներկայացումը, երկրատարածական տեղեկատվության կառավարման ոլորտում առկա մարտահրավերների քննարկումը, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

7. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Միջոցառման ընթացքում ներկայացված միջազգային փորձի և քննարկված ժամանակակից մոտեցումների հիման վրա առաջարկվել է շարունակել երկրատարածական տվյալների կառավարման գործընթացների կատարելագործումը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով արհեստական բանականության կիրառմանը, տվյալների փոխգործունակությանը, տեղեկատվության հասանելիության ընդլայնմանը և կլիմայական ու աղետների ռիսկերի կառավարման նպատակով աշխարհատարածական տվյալների արդյունավետ օգտագործմանը:

8. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Սուրեն Թովմասյան

28.09.2026 թ.

Հավելված N 2 ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման
Հավելված N 3 ՀՀ վարչապետի N 1230-Ն որոշման

Հաշվետվություն
Գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին

1 Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե

2 Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ Վարչապետի Որոշում 21.08.2026թ. N740-Ա

3 Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոն Սուրեն Թովմասյան Կադաստրի կոմիտեի ղեկավար

4 Գործուղման վայրը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, քաղաք Սանյա

5 Գործուղման ժամկետները 21.09.2026-25.09.2026թթ.

6 Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը(Կադաստրի կոմիտեի 2026 թվականի ծախսերի նախահաշիվ)
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
1. ճանապարհածախս, 2. գիշերավարձ, 3. օրապահիկ
ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)
		Սուրեն Թովմասյան	
	Ավիաճառայության տեսակը էկոնոմ դաս Ավիաճառայության արժեք (դրամ)	471,400	471.4
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) $	107	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	38,870.96	
	Օրերի քանակ	4	
	Ընդամենը (դրամ)	155,483.84	155.5
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) $	78	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	28,335.84	
	Օրերի քանակ	5	
	Ընդամենը (դրամ)	141,679.20	141.7
Այլ ծախսեր			-
Ընդամենը ծախսեր (դրամ)			768.6

Գլխավոր քարտուղար Մհեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան
30.09.2026թ.